

**ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ  
ԲԱՑԱՌԻԿ ԹԵՄԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱԻՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ  
ՀԱՅԱՍՏԱՆԵԱՑՑ ԵԿԵՂԵՑԻՈՑ ՀԻՒՍԻՍԱՑԻՆ ԱՄԵՐԻԿԱՑԻ  
ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ**

**Յունուար 14, 1995**

**Ս. Վարդան Մայր Տաճար, Նիւ Եորք, Ն. Ե.**

Հայաստանեայց Եկեղեցւոյ Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան Թեմի բացառիկ Թեմական Պատգամաւորական Ժողովի բացումը կատարուեցաւ Ծաբաթ, Յունուար 14, 1995, յետ միջօրէի ժամը 1.00ին: Այս ժողովը կը գումարի մասնաւորաբար Թեմէն 24 պատգամաւորներ եւ 12 անձնափոխանորդներ ընտրելու՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրութեան մասնակցելու համար Ս. Էջմիածնի մէջ գումարուելիք Ազգային Եկեղեցական Ժողովին:

**Հոգեհանգստեան մասնաւոր պաշտօն՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Նորին Ս. Օծուփին՝ Տ. Տ. Վազգէն Ա.ի հոգիին համար**

Արեւելեան Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Խաժմակ Արք. Պարսամեան, իր շորջը ունենալով Հոգշ. Տ. Հայկազուն Ծ. Վրդ. Նաճարեանը, Արժշ. Տ. Կարապետ Քհնյ. Քոչաքեանը, Արժշ. Տ. Թադէոս Քհնյ. Ապտալեանը եւ բարեշնորհ Վահան Արկ. Պազալեանը, նախագահեց հոգելոյս Վազգէն Ա. Հայրապետի հոգեհանգստեան արարողութեան: Ներկայ պատգամաւորները մասնակցեցան շարականներու երգեցողութեան՝ առաջնորդութեամբ Ս. Վարդան Մայր Տաճարի դպրաց դասի ղեկավար Խորէն Մէլիսանէճեանի. երգեհոնի նուագակցութիւնը կատարեց Հոգշ. Տ. Մամիկոն Արք. Գիլէճեան:

**Բարիգալստեան խօսք**

1994 թուականի Թեմական Պատգամաւորական Ժողովի ատենապետ Տոբթ. Կարօ Կարիպեան բարի գալուստ մաղթեց ներկաներուն, եւ Բացառիկ Թեմական Պատգամաւորական Ժողովը բացուած յայտարարեց յետ միջօրէի ժամը 1.43-ին:

**Ժողովականներու մեծամասնութեան ստուգում**

Ատենապետը խնդրեց Առաջնորդարանի քարտուղար Նուպար Բիւիէլեանէ կարդալ ներկայ պատգամաւորներուն անունները: Հաստատուեցաւ որ ներկայ էին 142 պատգամաւորներ, ներառեալ 11 անձնափոխանորդներ (պատգամաւորներու ընդհանուր թիւն է 193): Ատենապետը յայտարարեց որ պատգամաւորներու մեծամասնութիւնը ներկայ էր եւ ժողովը օրինաւոր կը նկատուի: Ատենապետը առաջարկեց վաւերացնել 11 անձնափոխանորդները. առաջարկը երկրորդուեցաւ եւ ընդունուեցաւ:

**Ժողովավարական օրէնքներ**

Ատենապետը հակիրճ կերպով բացատրեց պատգամաւորներուն յանձնուած ծրարին պարունակութեան մասին եւ յիշեցուց ժողովի գործընթացքը:

Ատենապետը թելադրեց առաջարկ մը ներկայացնել որդեգրելու համար «Ռապրթ Բուլս Ավ Օրտըր»ը: Առաջարկ ներկայացուեցաւ, երկրորդուեցաւ եւ ընդունուեցաւ:

Ատենապետը կրկին նշանակեց 1994 թուականին Թեմական Պատգամաւորական Ժողովի խորհրդարանականները, որոնք էին՝ Էտուրըտ Պրոսթըր (Ուոթըրթաուն՝ Մասսաչուսէց), Սեթ Պիլազէրեան (Ուստըր՝ Մասսաչուսէց) եւ Ճէք Վիշապ (Չելթընհամ՝ Փէնսիլվէնիա):

Ատենապետը նշանակեց կարգապահութեան երկու պատասխանատուներ՝ Ծան Զեքեմեան (Էլպըրոն՝ Նիւ Ճըրզի) եւ Գեղամ Զոլագեան (Նիւ Եորք՝ Նիւ Եորք):

Ատենապետը՝ ոչ—պատգամաւոր Վիքթոր Արզումանեանը (Թէնէֆլայ՝ Նիւ Ծըրզի) նշանակեց որպէս օգնական քուէարկութեան գործընթացքի:

Ատենապետը տեղեկացուց պատգամաւորներուն քուէարկութեան համակարգիչով նոր մեթոտի մը կիրարկման մասին: Ան բացատրեց քուէարկութեան հետեւեալ դրութիւնը. գործածել միայն թիւ 2 մատիտ, չծալլել քուէաթուղթը, ամբողջօրով սրբել բոլոր սխալները եւ խուսափիլ անտեղի նշանագիրներէ քուէաթուղթին վրայ: Ասոնցմէ զատ պատգամաւորը չի կրնար քուէարկել որոշուած թիւէն աւելի թեկնածուներու (այս պարագային 24):

### **Տեղեկագիր Ընտրողական Ցանձնախումբի**

Ատենապետի առաջարկով Ընտրողական Ցանձնախումբի ատենապետ Սահակ Սահակեան տեղեկութիւններ տուաւ քուէարկութեան գործընթացի մասին:

Ան ըսաւ թէ Դեկտեմբեր 24ին Պատգամաւորներուն դրկում չէր առաջարկները հացադիկ Թեմական պատգամաւորական Ժողովի ընթացքին քննուելու համար: Ան վերատեսութեան ենթարկեց առաջարկները. ընտրութիւն մեծամասնութեան թէ առատելութեան քուէներով, տեղւոյն վրայ առաջարկուած անուններ եւ քուէարկութեան դրութիւնը (յաւելուած 1, Անգլերէն բաժին):

Ատենապետը ընդմիջելով՝ կարգ մը օգտակար տեղեկութիւններ հաղորդեց Հայաստան ճամբորդելու կապակցութեամբ: Ան յիշեցուց պատգամաւորներուն որ ընտրողները պատասխանատու պիտի ըլլան իրենց ճամբորդութեան կարգադրութիւններուն եւ ծախքերուն: Այսուհանդերձ, Առաջնորդարանը կարգադրութիւններ ըրած է ճամբորդական գրասենեակի մը հետ: Գրասենեակը վարձած է օդանաւ մը, որ Նիւ Եորքէն ճամբայ պիտի ելլէ Ռոքթաթ Մարտ 31ին եւ պիտի վերադառնայ Երկուշաբթի Ապրիլ 10ին: Ժողովի ասարտին՝ ճամբորդական գրասենեակի ներկայացուցիչը տրամադրելի պիտի ըլլայ յաւելեալ տեղեկութիւններ հայթայթելու համար:

Ատենապետը յայտարարեց որ երեք առաջարկները պէտք է ներկայացուին՝ ընդունելու համար քուէարկութեան գործընթացքը:

Առաջարկուեցաւ եւ երկրորդուեցաւ մեծամասնութեան քուէի դրութիւնը: Առարկութիւն տեղի չունենալով՝ առաջարկը որդեգրուեցաւ: Ատենապետը լուսաբանութիւն տուաւ եւ նշեց որ մեծամասնութիւն կը նշանակէ կէսէն մէկ աւելի:

Առաջարկուեցաւ, երկրորդուեցաւ եւ ընդունուեցաւ՝ տեղւոյն վրայ եղած նոր թեկնածուներու անունները նկատի ունենալ մեծամասնութեան քուէով: Ժողովը որդեգրեց այս առաջարկը:

Առաջարկուեցաւ եւ երկրորդուեցաւ քուէարկութեան դրութիւնը, եւ երկրորդ ընտրութեան պարագային զանց առնուելիք թեկնածուներու համեմատութիւնը: Որոշումը որդեգրուեցաւ:

Գանի Գասպարեան (Թրամպըլ՝ Քընէթիքէթ) հարց յարոյց թեկնածուներու անուններու ընտրութեան դրութեան մասին: Ընտրողական Ցանձնախումբի ատենապետ Սահակ Սահակեան բացատրեց թէ ինչ կերպով իր գործակիցները ստացած եւ հաստատած են թեկնածուներու անունները: Գանի Գասպարեան հարց ուղղեց թէ ինչո՞ւ կարգ մը թեկնածուներու կենսագրութիւնները չէին պարունակել կրթութեան վերաբերեալ տեղեկութիւններ: Ատենապետը ըսաւ որ Ցանձնախումբի ատենադպիրը կատարած էր խմբագրական աշխատանքը եւ կարգ մը կենսագրական գիծեր շատ ընդարձակ ըլլալով ստիպուած էր կրճատել: Արժ. Տ. Ընձակ Քհնյ, Նալպանտեան (Թրամպըլ՝ Քընէթիքէթ) նշեց թէ կենսագրական գիծերու կրճատումները արդար չէին թեկնածուներու նկատմամբ:

Գանի Գասպարեան հարցուց բոլոր թեկնածուները ներկայացնելու կարելիութեան մասին: Առաջնորդ Սրբազան Հայրը դիտել տուաւ որ այդ գաղափարը ընդունելի պիտի ըլլար եթէ բոլոր թեկնածուները ներկայ ըլլային. հետեւաբար այդ ներկայացումը բաւարար պիտի չըլլար:

Ատենապետը առիթ ընծայեց նոր թեկնածուներու անունները առաջարկել ներկայ պատգամավորներուն կողմէ: Ոչ մէկ անուն ներկայացուեցաւ: Առաջարկուեցաւ եւ երկրորդուեցաւ փակուած նկատել ցանկը: Առաջարկը ընդունուեցաւ:

Ատենապետը հարց տուաւ թէ կայի՞ն թեկնածուներ, որոնք կը փափաքէին իրենց անունը յետս կոչել: Երկու թեկնածուներ՝ Էտուրտ Օնանեան (Ռաշիմկոյն՝ Տի. Սի.ի Ս.ի) եւ Գեղամ Չոլագեան (Նիւ Եորք՝ Նիւ Եորք) խնդրեցին որ իրենց անունները ջնջուին ընտրելիներու ցանկէն:

Արժ. Տ. Արտէն Ա. Քհնյ. Այվագեան (Լիվինկոյն՝ Նիւ Ճրրզի) խնդրոյ առարկայ ըրաւ հիմնական պատճառը համեմատական թիւ մը չհաստատելու ընդմէջ եկեղեցական եւ աշխարհական ընտրելի պատգամավորներու, որոնք պիտի մասնակցին Ազգային Եկեղեցական Ժողովին Էջմիածնի մէջ: Ատենապետը կանոնական չնկատեց Տէր Հօր յարուցած հարցը: Տէր Արշէն առարկութիւն ըրաւ ատենապետին որոշումին դէմ: Առարկութիւնը երկրորդուեցաւ: Քուէարկութեամբ առարկութիւնը մերժուեցաւ ներկաներուն կողմէ:

Ատենապետը խնդրեց Գանի Գասպարեանէն (Թրամպըլ՝ Քընէթիքէթ) օգնել Ընտրողական Յանձնախումբին: Ան նաեւ յայտարարեց որ Պատուելի Քիթ Մալքմըն, Առաջնորդարանի նուիրահաւաքման բաժանմունքէն, եւ Ժանէթ Դաիթեան (Պէյսայտ՝ Նիւ Եորք) պիտի օգնեն համակարգիչով քուէները հաշուելու աշխատանքին:

\* \* \*

Մինչ Ընտրողական Յանձնախումբը կը պատրաստէր քուէաթուղթերը, Առաջնորդարանի Մնայուն Յուշարձանի Յանձնախումբի ատենապետ Ժան Հոփլամագեան բացատրութիւններ տուաւ «Յուշարձան»ի մասին, որուն բացումը պիտի կատարուի թեմակալ Առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ Արք. Պարսամեանի ձեռամբ այս գարնան:

Առաջնորդ Սրբազան Հայրը ընդհանուր տեղեկութիւններ տուաւ կաթողիկոսական ընտրութեան կերպերուն մասին, եւ պատասխամեց այս կապակցութեամբ եղած հարցումներուն:

**Ընտրութիւն պատգամավորներու եւ անձնափոխանորդներու՝ Ազգային Եկեղեցական Ժողովին մասնակցելու համար**

Ընտրողական Յանձնախումբը բաշխեց քուէաթուղթերը եւ քանի մը վայրկեան յատկացուց պատգամավորներուն՝ որպէս զի ամբողջացնեն զանոնք (յաւելուած 3, Անգլերէն բաժին): Ապա, Ընտրողական Յանձնախումբը հաւաքեց քուէաթուղթերը՝ ներկայ պատգամավորներու անուններուն ստուգումը կատարուելէ ետք:

\* \* \*

Մինչ Ընտրողական Յանձնախումբը գրադած էր քուէաթուղթերը հաշուելու գործով, Ատենապետը ներկայացուց Էնտի Ուզունեանը (Թէնէֆլայ՝ Նիւ Ճրրզի) եւ Յակոբ Ժէպէնեանը (Թէնէֆլայ՝ Նիւ Ճրրզի) տեղեկագրելու Առաջնորդարանի մէջ կատարուած նորոգութեան եւ բարեգարդման աշխատանքներուն մասին, որոնք տեղի ունեցան վերջերս եւ տակաւին կը շարունակուին:

**Ա. Քուէարկութեան արդիւնքները**

Ընտրողական Յանձնախումբը յայտարարեց որ մեծամասնութեան ձայնով միայն վեց հոգիներ ընտրուած էին (140 քուէ տրուած է):

Ընտրուած պատգամավորները են՝  
Էտուրտ Չափեան (Պէյսայտ՝ Նիւ Եորք)  
Սուրէն Տէսնեան (Ուեսթչեսթըր՝ Նիւ Եորք)

Տոթք. Կարօ Կարիպեան (Չելթընհամ՝ Փէնսիլվէնիա)  
 Դատաւոր Վինսթըն Կիրաթեան (Ուեսթչեսթըր՝ Նիւ Եորք)  
 Գեորգ Յովնանեան (Էլպրոն՝ Նիւ Ճըրզի)  
 Տոթք. Տէնիս Փափագեան (Սաութֆիլտ՝ Միչիկըն)

Մնացեալ 100 անուններուն մէջէն 75 առաւելագոյն քուէ ստացողները ցանկին վրայ պիտի պահուին: Ընտրողական Յանձնախումբը առաջարկեց որ ընդունուած ընտրական օրէնքները փոփոխութեան ենթարկուին: Ատենապետը բացատրեց թէ ժամանակի հարկադրանքին պատճառաւ Ընտրողական Յանձնախումբը կը խնդրէ քուէարկութիւնը կատարել մեծամասնութեան քուէի տեղ առաւելութեան քուէով, որպէս զի կարելի ըլլայ 18 պատգամաւորներ ընտրել երկրորդ քուէարկութեան ընթացքին: Մնացեալ անուններուն մէջէն պիտի ընտրուին 12 անձնափոխանորդները: Այս առաջարկը ընդունուեցաւ:

Արժ Տ. Տաճատ Ա. Քհնյ. Դաւիթեան (Ուոթըրթաուն Մասսաչուսէց) առաջարկեց 77ի տեղ առաւելագոյն քուէ ստացող 36 անունները նկատի ունենալ՝ ընտրելու համար 18 պատգամաւորները: Այս կերպը անլի ժամանակ պիտի խնայէ: Առաջարկը երկրորդուեցաւ: Հարց տրուեցաւ թէ ինչպէ՛ս պիտի ընտրուին անձնափոխանորդները: Տէր Տաճատ ըսաւ թէ 18 բարձրագոյն քուէ ստացողները պիտի ըլլային պատգամաւորներ, իսկ յաջորդ 12 առաւելագոյն քուէ ստացողներն ալ անձնափոխանորդներ: Առաջարկը ընդունուեցաւ ներկաներու երկու երրորդի ձայնով:

\* \* \*

Մինչ Ընտրողական Յանձնախումբը կը պատրաստէր քուէաթուղթերը, հետեւեալ անձերը ելոյթ ունեցան.

Առաջնորդարանի դիւանապետ Արժ. Տ. Կարապետ Քհնյ. Քոչաքեան հակիրճ կերպով խօսեցաւ «Ս. Գիրքի Տարուան» մասին: Ան նշեց թէ Չելմսֆըրտ Մասսաչուսէցի մէջ գումարուելիք Թեմական Պատգամաւորական Ժողովի բնաբանը պիտի ըլլայ «Ապրիլ Աստուծոյ շունչով»: Ան արտայայտուեցաւ նաեւ վերջերս հրատարակուած Ս. Գիրքի մասին, որ կը ներկայացնէ Հայերէն Ս. Գիրքին Անգլերէն թարգմանութիւնը:

Ծան Ամպոյեան յիշեցուց պատգամաւորներուն որ 93րդ Տարեկան Թեմական Պատգամաւորական Ժողովը պիտի հիւրընկալուի Չելմսֆըրտ Մասսաչուսէցի Սրբոց Վարդանանց Եկեղեցոյ կողմէ:

Գրիգոր եւ Գլարա Զոհրապ Տեղեկատուութեան Կեդրոնի վարիչ՝ Հոգ. Տ. Գարիգոր Վրդ. Մագսուտեան ընդհանուր գիծերու մէջ ներկայացուց վերջերս իր պատրաստած ուսումնասիրութիւնը կաթողիկոսական ընտրութեան մասին:

Միութեան Յանձնախումբի ատենապետ Զաւէն Գասպարեան ամփոփեց դէպքերը, որոնք տեղի ունեցած են 1994 Մայիսի Թեմական Պատգամաւորական Ժողովի գումարումէն ի վեր:

\* \* \*

Ապա, երկրորդ քուէաթուղթերը բաժնուեցան:

#### **Բ. քուէարկութեան արդիւնքները**

Ընտրողական Յանձնախումբը տեղեկագրեց որ 140 քուէաթուղթեր հաւաքուած էին:

Ընտրուած 18 պատգամաւորներն են՝

Ծան Ամպոյեան (Չելմսֆըրտ՝ Մասսաչուսէց)  
 Ծուլիա Աշրգեան՝ (Հարթֆըրտ՝ Քընէթիքէթ)  
 Տ. Արտէն Ա. Քհնյ. Աշճեան (Եանքըրգ՝ Նիւ Եորք)  
 Տ. Տաճատ Ա. Քհնյ. Դաւիթեան (Ուոթըրթաուն՝ Մասսաչուսէց)  
 Հայկ Տատուբեան (Լիվինկսթըն՝ Նիւ Ճըրզի)  
 Կրոզպի Կօշակարեան (Ուոթըրթաուն՝ Մասսաչուսէց)  
 Տ. Գառնիկ Ա. Քհնյ. Հալլանեան (Հաքընսաք՝ Նիւ Ճըրզի)

Ման Հովհաննիսյան (Չելթրենհամ՝ Փենսիլվեյնիա)  
 Տոթթ. Բաֆֆի Յովհաննիսյան (Փեյլըս Հայթց՝ Իլլինոյ)  
 Զաւէն Գասպարեան (Ռուտըր՝ Մասսաչուսեց)  
 Տ. Մամբրէ Ա. Բհնյ. Գուգուեան (Գեյմպրի՝ Մասսաչուսեց)  
 Մորն Մարիֆեան (Պելվիլ՝ Իլլինոյ)  
 Ռոզ Մեքեան (Թեյնթայ՝ Նի Մըրզի)  
 Տ. Հայկազուն Ծ. Վրդ. Նաճարեան (Նի Եորթ, Ն.Ե.)  
 Տին Շահինեան (Ռաշինկթըն՝ Տի. Սի.)  
 Տ. Պարէտ Ծ. Վրդ. Երեցեան (Սաութֆիլտ՝ Միչիկըն)  
 Ասպետ Զաքարեան (Ռուտըր՝ Մասսաչուսեց)

Ընտրուած 12 անձնափոխանորդներ (ստացուած քուէներու կարգով)  
 Զաւէն Տաւեքեան (Ֆերլոն՝ Նի Մըրզի)  
 Տ. Հայկազուն Ծ. Վրդ. Մելգոնեան (Չելթրենհամ՝ Փենսիլվեյնիա)  
 Սարգիս Պետեան (Ֆերլոն՝ Նի Մըրզի)  
 Էտուրըտ Պրոսթըր (Ռոթըրթաուն՝ Մասսաչուսեց)  
 Տ. Շնորհք Ծ. Վրդ. Գասպարեան (Պելվիլ՝ Իլլինոյ)  
 Տոթթ. Յարութիւն Միսեան (Թեյնթայ՝ Նի Մըրզի)  
 Նուպար Տօրեան (Եունիըն Սիթի՝ Նի Մըրզի)  
 Տ. Եփրեմ Բհնյ. Գըլիճեան (Ռեյսին՝ Ռիսքանսըն)  
 Տ. Վրթանէս Ա. Բհնյ. Գալայճեան (Ռաշինկթըն Տի. Սի.)  
 Սարգիս Սուլթանեան (Ֆերլոն՝ Նի Մըրզի)  
 Ռիթա Պալեան (Ռաշինկթըն Տի. Սի.)  
 Տ. Օշական Վրդ. Կիլկիլեան (Մայամի՝ Ֆլորիտա)

**Փակման խօսքեր**

Ատենապետը եւ Առաջնորդ Սրբազան Հայրը շնորհակալութիւն յայտնեցին օրուան դիւանի անդամներուն եւ պատգամաւորներուն՝ անոնց կատարած օգտակար աշխատանքին եւ ցուցաբերած գործակցութեան ոգիին համար:

**Փակման աղօթք**

Առաջնորդ Սրբազան Հայրը պաշտօնապէս փակեց Բացառիկ Թեմական Պատգամաւորական Ժողովը, երեկոյեան ժամը 6.00ին, աղօթքով եւ խմբովին երգուած «Հայր Մեր»ով:

*Խաչատուր Արք. Կրկունք*  
 ԽԱՇԱԿ ԱՐԶ. ՊԱՐՍԱՄԵԱՆ  
 Առաջնորդ, Նախագահ

*Law S. Gariban MD*  
 Տոթթ. Կարօ Կարիպեան  
 Ատենապետ

*Edward M. Chapian*  
 Էտուրըտ Չափեան  
 Փոխ Ատենապետ

*Anna Marie Novak*  
 Աննա Մարի Նորդհատ  
 Անգլերէնի ատենադպիր

*Գրիգոր Վրդ. Մազումեան*  
 Գրիգոր Վրդ. Մազումեան  
 Հայերէնի ատենադպիր